

ԲԻՇԻՐ ՈՂԶՈՅՆ, ԵՐԿԱՌ ԿԵԱՆՔ

ՍՆՉՈՒԳԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ – ԶԵՐՄ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ,
ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆ, ԱԼԵԶԱՐԴ ՑՈԲԵԼԵԱՐԻՆ,
ՈՂԶՈՅՆ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՈՒ ԵՐԿՆԱՄԵՐՁ ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԻՑ
ՀԻՆԱԽՈՒՐՑ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՄԱՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ

Սյոօր տօն է խնդութեան, Սիրիայի եւ Լիբանանի հայ հասարակութիւնը այսօր տօնում է հանուրի համականքին արժանացած մեր աւագագոյն եկեղեցականներից մէկի՝ Տանն Կիլիկոյ Տ. Տ. Տարեգին Շնորհազարդ Կաթողիկոս Յովսէփին քահանայութեան 50-ամեա, եկեղեցական, գրական, գիտական գործունէութեան 60-ամեա եւ ծննդան 80-ամեա պանծալիք յորթեանք:

Փառայեղ կենք ուղի է անցել Կսեմաշուք Ցորելեարը, կեանքի Մարդը, խօսքի, զրիք շնորհալի Վարպետութեան:

Գարեգին Կաթողիկոս Յովսէփին Հայ եկեղեցու եզակի գէմբերից մէկն է հանդիսանում, եզակի իր եկեղեցաշինարարական, հայրենասիրական, գրական-գիտական գործունէութեամբ: Նրա անունը ծանօթ է ոչ միայն հայրենիքին ու հայկական զիթէ բոլոր գաղութներին, այլ եւ օտարազգի հասարակական ու գիտական շրջաններին: Արպէս առաքինի ու շիտակ եկեղեցական, որպէս առողջ մտքի ու լայն սրտի տէր անձնաւորութիւն, նա վայելում է ոչ միայն հայերի, այլ եւ բարեկամ ժողովուրդների սէլը ու համականըը:

Մեծ է նրա աւանդը Հայ եկեղեցու բարգաւաճման եւ հայ արուեստի, մշակոյթի, պատմութեան ուսումնասիրման գործում:

Տամանեակ տարիներ անձնուիրաբար սպասարկել է նա Հայ եկեղեցուն, մեծ ծառայութիւններ մատուցելով կրան: Նրա եկեղեցաշինարարական գործունէութիւնը չափազանց ընդարձակ հորիզոններ է ընդգրկել, սկսած Ս. Էջմիածնից, Թիֆլիսից, Նորնախիցնեանից, Դրիմից մինչեւ Միջին Արևոտնու Արեւելքի, Եւրոպայի եւ Նոր Աշխարհի երկրները: Ամենուրեք, ուր այցելել է նա, Հայ եկեղեցին փայտել, նոր վերելք է ապրել:

Սակայն Գարեգին Կաթողիկոսը ոչ միայն զերմեռանդ եկեղեցասէր է, այլ եւ զերծ հայրենասէր: Նրա մօտ եկեղեցասիրութիւնն ու հայրենասիրութիւնն անբաժան են: Ղարապաղի սիրապան լիւների այս կորովի զաւակը իր արծուալին թռիչքով ընդգրկել է աշխարհի գրեթէ բոլոր հայածակ վայերերը: Նա այցելել է աշխարհի այն բոլոր անկիւնները, ուր հայութեան բեկորներ կանաւուուած եւ իր զգայացունց նառերով, քարոզներով յուսազերել, հայրենիքի սիրով զերմացրել նրանց հայրենաբատձ սրտերը, հայրաբար սփոփել շշտերը:

Նա խօսքի մեծ վարպետ լինելով գիտէ արագօքէն գրաւել իր ունկնդիրների սրբաւը, մեծ արուեստագէտի հմտութեամբ շօշափել կրանց հոգու թրթռուն, նուրք, գերզգայուն լարերը, պահել կրանց հոգեզմայլ, յափշտակուած վիճակում, իր դիպուկ, նպատակասլաց բառերով ալեկոծել կրանց ներաշխարհը, ներշնչել վսեմ ու ազնիւ գաղաքարները: Նա իր ունկնդիրներին թովում, գիտում է իր չափազանց պարզ, զիտիտ, սրտազբաւ, հոգու խորքից յորդող անկեղծ խօսքերով. իր խօսելու ամրող տեւողաւթեան պահերին նա կարողանում է ոչ միայն մագնիսացնել, լարուած վիճակում պահել իր ունկնդիրներին, այլ եւ տիրաբար իշխել կրանց զգացմունքների վրայ: Իր հայրենագունէ ճառաբորով նա հայ ժողովրդի աստանդական զանգուածները միշտ էլ խանդա-

վառել է հայրենամբութեամբ, բորբոքել նրանց հոգու խորբում անմար պահուած հայրենիքի սիրոյ կայծերը, հրդիկել նրանց սրտերը հայրենիքի սիրով : Այդ որ նղեկ է նա, Սրարատի նուրբական փէշիք սկսած մինչեւ Խաղաղականի ափերը, իրանի աս- րահարթից մինչեւ Ներոսի հովիտը, Եւրոպայի երկրներից մինչև Միջագետքի երկրները, ամենուրեք ու ամէն տեղ հայ ժողովրդի աստանդական բնկորներին կոչ է արել արեւա- ծաղկի նման երեսով զարձած միան զէպի Արարատի սուրոտում ծաղկող հայրենիքը, զէպի Թանկագին Սովետական Հայաստանը, որ հայ ժողովրդի «կենդանութեան արեւան է» . յորդորել է աչքը պահել «ուղղած մեր Հայրենիքին, Սովետական Հայաստանին, սիրել նրան սրտի ամբողջ էութեամբ» : Աւ ինքն էլ իր ամբողջ էութեամբ սիրել է հայ- րենիքը, ոգեշնչուել նրա յարանուն վերիլով : Հայրենիքից հեռու, բայց միտ հայրե- նիքի հետ . Փարիզում թէ նիւ-Եորբում, Եզիքտոսում թէ Կիպրոսում, Անթիլիասում թէ Դամասկոսում ու այլուր, Ելոյթների թէ մենութեան պահերին նրա ալյերի առաջ միշտ ուրուագծուել ու ուրուագծուում են խրոխտ ու վեհասարան Արարատները, բա- ռագագաթ Արագածը, բարձրագահ Սեւանը եւ իր երջանիկ կեանքը կերտող տաղանդա- ւոր հայ ժողովուրդը : Եւ նրա ականջներին դռը հնչում է Մայր Տաճարի զանգերի զօ- գանջը :

Խակ երբ իրականացան հայ ժողովրդի վտարանդի զաւակների, ինչպէս եւ Գարե- գին Կաթողիկոսի, իշեմքը ու հայ ժողովրդի պանդուխտ որդիները կարաւաններով հայ- րենիք էին ֆանապարհուում, ՅՕ-ամենայ բոցաշունչ հայրենասէք Կաթողիկոսը հանգիստ չգիտէր . նա շրջագայում էր ամէն տեղ, կազմակերպում ներգաղթը, հայրենագագրի կարաւանները մէկիկ մէկիկ նաւահանգիստ առաջնորդուում, ողջերթ մաղթում նրանց :

Գարեգին Կաթողիկոսը, նշանաւոր եկեղեցական լինելուց զատ, գրական անխոնց մշակ, մնածահամբաւ գիտնական է հանդիսանուում : Մի ձեռքում խալք, միւսում գրիցը, այսպէս է եղել նա, նրա մօս եկեղեցական գործունէութիւնը միշտ զուգորդուած է ե- ղիկ գրական-գիտական գործունէութեան հետ : Սննդ Գարեգին Կաթողիկոսին հանա- չում ենք ոչ միայն որպէս սոսկ նշանաւոր եկեղեցական անձի, այլ եւ որպէս հայ ար- ուեստի, մշակոյթի, պատմութեան բացածանօթ, լաւատեղեալ գիտնականի, որպէս պատմաբանի, ննագէտի, բանասէրի, մատենագրի :

Նրա բեղմնաւոր գրչին են պատկանում, բազմապիսի խնդիրների նուիրուած, հարիւթից աւելի ուսումնամբութիւններ, որոնք լոյս են տիսել զանազան պարբերա- կաններում եւ չորս տասնեակի համանող առանձին գրերով լոյս տեսած կամ հրատա- րակութեան համար պատրաստ աշխատութիւններ . դրանք պատմական, ննագիտական, բանափառական, մատենագրական, արուեստագիտական բնոյթ են կրում . դրանցից մը քանիքը բազմահարոր, սուուրածաւալ աշխատութիւններ են ներկայացնում, մնձ մա- սամբ նուիրուած հայ արուեստի, մշակոյթի ուսումնամբութեանը :

Ո՞վ կարող է հաջուել, թէ այս անխօն գիտնականի ծեռքերը բանի հազար ծե- ռազբեր են շօշափել ու մատները բանի հազար մագաղաթի ու թղթի թերթի թերթել, բանի հազար ծեռազբերի վրայ նա գլուխ է խոնարհել, տրնազան աշխատանք թափել, Հայ ձեռազբերի այս մնձ սիրահարը հանգիստ չգիտիք, մննք նրան տեսնում ենք եւ եզմիածին եւ երուասպէմի մատենադարաններում, եւ լենինկրասի երմիտաժում, եւ Պերլինի, Փարիզի, Նիւ-Եորբի, Վենետիկի, Վիեննայի ու այլ բազմաթիւ մատենադա- րաններում :

Ամէն տեղ նրա հնտախոյց միտքը պրատումներ, որոնումներ, վերլուծութիւններ, համադրութիւններ կատարելով վերստին կեանքի էր կոչում, կեանքի ուղեգիր շնորհում մեր արժանայիշատակ նախնիքների մոռացութեան մատնուած, ննադարեան փոշով ծածկուած գործերին : Զեռագրերի աշխարհը Գարեգին Կաթողիկոսի կեանքի տարրերն են կազմուլ . նրան յանախ կարելի է տեսնել շրջագատուած ծեռազբերով . կարելի է ասել, գրեթէ բույր հայ ծեռազբերի վրայ նրա մատների հնտերը կան գրօշմուած :

Սակայն Գարեգին Կաթողիկոսը իր առանձնարանում փակուել, մննանալ ու միշտ

ծեռագրերի ծովում ընկղմուել չփափեր . նա առանձնարանով ու մագաղաթի եւ թղթի թանկագին ծեռագրերով սահմանափակուող զիտնական չէր . նա սիրել է շղագայել ու կարդալ հայ բնաշխարհի լեռնահովիտներում ու լեռնակատարներին առատութեամբ սփոռուած անթիւ ու անհամար «գրգերը» — գաների, մենաստանների, եկեղեցների, տապանաբարերի, խաչքարերի, նաև արեան յուշարձանների վրայ եղած արծնազրութիւնները : Ո՞վ կարող է հաջուել, թէ քանի նազար արծանազրութիւնների առաջ է կանգնել նա ժամերով, ուսումնասիրել, վերծանել, քանի հազար տապանաբարերի, խաչքարերի վրայ կուցել, վանքերի, մենաստանների, եկեղեցների, աւերուած բերդերի, քաղաքների մասցորդ բեկորների վրայ տքնել . հնութեան ամէն մի բեկոր, ամէն մի քար չի վրիպել նրա ուշարձութիւնից : Այցելել է նա անդնդախոր կիրճներում, անմատելի ժայռերի կատարներին, մթին անտառների թաւուտներում ու լեռնածերպերին առանձնաց նին ու նոր, չեն թէ կիսաւեր վաներին ու մենաստանները, դարերի մասուուով զգեստարուուած հինաւուրց յուշարձանները : Միացէս է աշխատել նա, վկայակուելով ու պահանջ զնելով ոչ միայն ծեռագրերին, այլև բնութեան յուշարձանների խօսուն բեկորներին, որոնք նշանաւուցի վկաներն են հանդիսանուում մեր անցեալի պատմութեան : Նրա անվերջ պրապուող, վերլուծող, քաղդատող միտքը այս ժանապարհով կարողացի է անսպաս նիթ կուտակել հայ արուեստի, մշակոյթի, պատմութեան վիրաբերաւ : Նրա խորաթափանց հայացքի տակ շունչ ու լիզու են առել քարի բեկորները, շատ բան պատմել մեր նախնիքների փառաւոր անցեալի մասին : Նրա մոգական զրի տակ վերակենդանացել, նոր փայլ ու արժէքաւորում են ընդունել մեր հնութեան մշակոյթի յուշարձանները, մոռացութեան մատնուած շատ հոյակապ կոթողներ : Նրա ուսումնասիրութիւնների, այցելութիւնների հետեւանքով հայ մշակոյթի շատ արժէքներ են փրկուել կորստեան վերահաս վտանգից : Դարերի փոշու տակ թաղուած, անուշադրութեան մատնուած բազմաթիւ ծեռագրեր եւ մամուպատուած ու անզիտութեան հետեւանքով ոչնչացուող անհամար յուշարձաններ նրա շնորհի ժողովրդի խնամքի ու գորգութեանքի առարկայ են դարձել :

Մեծ է նրա աւեանդ հայ արուեստի ուսումնասիրութեան բնագաւառում : Հայ գրչութեան արուեստի եւ յատկապէս հայ մանրանկարչութեան ուսումնասիրութիւնները բացառիկ տեղ են գրաւում նրա աշխատութիւնների փայլոն շարքում : Հայ մանրանկարչութեան գունազարդ քարտչը նրա աշխատութիւնների թագն ու պահն է կազմում : Այս հոյակապ գործով նա իր արժանաւոր տեղն է գրաւում : Հայ մանրանկարչութեան արուեստի ուսումնասիրութիւնը սերտ կերպով կապուած է Գարեգին Կաթողիկոսի անուան նետ . եթէ Կոմիտասը յայտնագործեց հայ երաժշտութիւնը, Թորամանեանը հայ ճարտարապետութիւնը, Գարեգին Կաթողիկոսն էլ յայտնագործեց հայ մանրանկարչութիւնը : Բայց այս եռեակի մէջ ամենաբախտաւորը հանդիսացաւ Գարեգին Կաթողիկոսը, որովհետեւ նրա երկար տարիների տքնացան աշխատանքի պատուինները կորստեան յմաստուեցին, մինչդեռ ինչպէս գիտներ, Կոմիտասի հաւաքած մի քանի հազար երգերը եւ Թորամանեանի տառնեակ տարիների աշխատանքի արդիւնք հանդիսացող նիւթերի մեծ մասը կորել են անդարձ, երկու գէպքում էլ թրքական վայրագութիւնների հետեւանքով :

Ի սրտէ ցանկանում ենք մօտ ապագայում աւարտուած ու տպագրուած տեսնել Դարեգին Կաթողիկոսի Հայ մանրանկարչութեան գունազարդ քարտէսը հոյակապ գործը, ինչպէս է նրա միւս գործերը :

Երկար կեանք ու առողջութիւն ենք մաղթում մեր ալեփառ Յորեկեարին :

(Խմբագրական Ս. Էջմուսիւն Ամսարեցիք, 1947 Յունուար-Փետրուար միացեալ թիւին)